



# ՀՖՖ ՏՈՄՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



**ՀՖՖ ՏՈՄՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԵՖԱ-ի ԵՎՐՈ 2020-ի ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՏՆԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ**

**ՆՊԱՏԱԿԸ**

Սույն փաստաթուղթը նպատակ է հետապնդում կարգավորել Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի՝ ՈՒԵՖԱ Եվրո 2020-ի ընտրական փուլի Հայաստանի ազգային հավաքականի տնային հանդիպումների տոմսերի վաճառքի և անհատույց տրամադրման քաղաքականությունը:

Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան՝ որպես խաղի կազմակերպիչ և ընդունող կողմ, իրավասու է վաճառել կամ անհատույց տրամադրել ազգային հավաքականի տնային հանդիպումների տոմսերը՝ համաձայն նախապես սահմանված գնացուցակի և կարգի:

Տոմսերի գների սահմանումն իրականացվում է ըստ խաղերի դասակարգման: Տոմսերի հստակ տեղաբաշխումն իրականացվում է ըստ տոմսերի դասակարգման:

**ԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Աշխարհի կամ Եվրոպայի առաջնության ընտրական յուրաքանչյուր մրցաշրջանից առաջ կկատարվի Հայաստանի ազգային հավաքականի խաղերի դասակարգում՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի՝ ազգային հավաքականների ներքին շրջանառության դասակարգման<sup>1</sup>: Ներկայումս մեր հավաքականն ընդգրկված է ՈՒԵՖԱ-ի Եվրոպայի 2020 առաջնության ընտրական փուլի J խմբում, որտեղ խաղերը կդասակարգվեն A, B և C կարգերի: Իտալիայի ազգային հավաքականի հետ տնային հանդիպումը կունենա A կարգ, Բոսնիա և Հերցեգովինայի, Ֆինլանդիայի և Հունաստանի ազգային հավաքականների հետ տնային հանդիպումները՝ B կարգ, իսկ Լիխտենշտեյնի ազգային հավաքականի հետ տնային հանդիպումը՝ C կարգ:

Տոմսերի գները կսահմանվեն ըստ խաղերի կարգերի: Ամենաբարձր արժեք կունենան A կարգի խաղերի տոմսերը:

Ֆիքսված կարգերով խաղերի տոմսերի գները կարող են փոփոխվել այն պարագայում, եթե տվյալ խաղը որոշիչ դեր ունենա խմբից դուրս գալու համար:

**ՏՈՄՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԳՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ**

Առանձնացվում են 1, 2, 3, 4, 5 և VIP կատեգորիաների տոմսեր: Արժեքով նվազագույն տոմսերը համարվում են 5-րդ կատեգորիայի տոմսերը: 5-րդ կատեգորիայի տոմսերը տեղաբաշխվում են Հյուսիսային և Հարավային տրիբունաներում ամբողջապես:

<sup>1</sup> ՈՒԵՖԱ-ի ներքին շրջանառության դասակարգումը կարող է տարբերվել ՖԻՖԱ-ի՝ ազգային հավաքականների դասակարգման աղյուսակից



Արժեքով հաջորդ նվազագույն կարգի տոմսերը 4-րդ կատեգորիայի տոմսերն են: 4-րդ կատեգորիայի տոմսերը տեղաբաշխվում են Արևելյան տրիբունայի անկյունային 2 սեկտորներում:

3-րդ կատեգորիայի տոմսերը զբաղեցնում են Արևելյան տրիբունայի կենտրոնական հատվածը:

2-րդ կատեգորիայի տոմսերը զբաղեցնում են Արևմտյան տրիբունայի ծայրամասային 2 սեկտորները:

1-ին կատեգորիայի տոմսերը զբաղեցնում են Արևմտյան տրիբունայի կենտրոնական հատվածը՝ չներառելով VIP կատեգորիան:

VIP կատեգորիայի տոմսերը տեղակայված են Արևմտյան տրիբունայի կենտրոնական հատվածում՝ առանձնացված սև, կաշվե թիկնաթոռներով: VIP կատեգորիայի տոմսերը վաճառքի ենթակա չեն:

Ստորև ներկայացվում են տոմսերի գներն ըստ խաղի կարգի և տոմսի դասակարգման:

	A կարգ	B կարգ	C կարգ
1-ին կատեգորիա (Արևմտյան տրիբունա)	12.000	9.000	6.000
2-րդ կատեգորիա (Արևմտյան տրիբունա)	10.000	7.000	5.000
3-րդ կատեգորիա (Արևելյան տրիբունա)	6.000	5.000	4.000
4-րդ կատեգորիա (Արևելյան տրիբունա)	3.000	3.000	2.000
5-րդ կատեգորիա (Հյուսիսային և Հարավային տրիբունաներ)	1.000	1.000	1.000

**ՏՈՄՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ/ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԱՃԱՌՔ**

Տոմսերի տրամադրումն/բաշխումն իրականացվում է՝ համապատասխան խաղի կարգի: Տոմսերի տրամադրումն իրականացվում է նախապես հաստատված խմբերի, անհատների և հովանավորների համար, ինչպես նաև նախապես ստացված կորպորատիվ դիմում-հայտերի հիման վրա: Նախապես ստացված կորպորատիվ դիմում-հայտերի հիման վրա իրականացվում է տոմսերի կորպորատիվ վաճառք: Կորպորատիվ վաճառքի դիմումների համար կիրառելի է գեղչային քաղաքականություն՝ ըստ տոմսերի քանակի՝

- 11-30 տոմս՝ 10% զեղչ,
- 31-50 տոմս՝ 20% զեղչ,
- 51-100 տոմս՝ 30% զեղչ,
- 101-150 տոմս՝ 40% զեղչ,



- 150-ից ավել տոմս՝ 50% զեղչ

Կորպորատիվ դիմումների հիման վրա զեղչեր տրամադրելու վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ-ն: Հյուսիսային և հարավային տրիբունաների տոմսերը կորպորատիվ վաճառքի ենթակա չեն: Ֆան-ակումբները չեն կարող դիմել կորպորատիվ փաթեթով տոմսեր գնելու համար: ՀՖՖ-ի կողմից տրամադրված անհատույց օգտագործման կամ կորպորատիվ դիմումներով ձեռք բերված տոմսերը վերավաճառքի ենթակա չեն:

### **ՖԱՆ-ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ ՄԱՐԶԱԴԱՇՏՈՒՄ**

Հայաստանի ազգային հավաքականի տնային հանդիպումների ժամանակ ներկա գտնվող ֆան-ակումբների համար առանձնացվել է Արևելյան տրիբունայի I և II սեկցիաների կենտրոնական 2 սեկտորների 1-7 կարգերի բոլոր նստատեղերը (կենտրոնական անցուղու աջ և ձախ կողմերը): Միևնույն ժամանակ ֆան-ակումբները պարտավոր են գնել 8-10 կարգերի տոմսերը ևս և դրանք թողնել դատարկ, որպեսզի կանգնած երկրպագելու ժամանակ որևէ անհարմարություն չստեղծեն 10-րդ կարգից վերև գտնվող կարգերում նստող երկրպագուների համար: Ֆան-ակումբների համար նշյալ նստատեղերը տրամադրվում են վաճառքի միայն այն դեպքում, եթե ֆան-ակումբները ՀՖՖ-ի հետ կնքում են անվտանգության նորմերի պահպանման և վարքագծի պարտավորագիր՝ համաձայնեցված ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնների և նորմերի հետ: Ֆան-ակումբների ներկայացուցիչների քանակի ավելացման դեպքում ՀՖՖ-ն իրավասու է լրացուցիչ հայտարարել Արևելյան տրիբունայի այլ հատվածներում տոմսերի տրամադրման մասին:

### **ՀՅՈՒՐՆԿԱԿՎՈՂ ԹԻՄԻ ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐ**

Հյուրընկալվող թիմի ֆեդերացիայի պաշտոնատար անձանց համար ՀՖՖ-ն կարող է հատկացնել առավելագույնը 20 VIP տոմս:

Միաժամանակ հյուրընկալվող թիմի ֆեդերացիայի համար ՀՖՖ-ն պարտավոր է տրամադրել 100 անվճար տոմս Արևմտյան տրիբունայում, և, ցանկության կամ նախապես դիմելու դեպքում՝ նույն հատվածում ևս 200 տոմս գնելու հնարավորություն:

Բացի անվճար տրամադրվող տոմսերից՝ ՀՖՖ-ն պարտավոր է առանձնացնել հյուրընկալվող թիմի երկրպագուների տրիբունա/սեկտոր՝ վաճառքի ենթակա տոմսերով: Այն պետք է կազմի մարզադաշտի նստատեղերի ընդհանուր թվի 5%-ը: Հյուսիսային տրիբունայի II-րդ սեկցիայի աջ թևը՝ առանձնացված ճաղավանդակներով, համարվում է հյուր-երկրպագուների սեկտորը՝ թվով 905 նստատեղ: Այս տոմսերը չեն վաճառվում տեղացի երկրպագուների համար: ՀՖՖ-ն կարող է վաճառել այս տոմսերը խաղից մի քանի օր առաջ միայն այն դեպքում, եթե չի ստացել որևիցե հայտ հյուր-երկրպագուների կողմից/հյուր ֆեդերացիայի կողմից: Քարտեզ 1



- Նշումներ՝
- 1-ին կատեգորիայի տոմսեր, ■ 2-րդ կատեգորիայի տոմսեր,
  - 3-րդ կատեգորիայի տոմսեր, ■ 4-րդ կատեգորիայի տոմսեր,
  - 5-րդ կատեգորիայի տոմսեր, ■ VIP նստատեղեր
  - ֆան-ակումբների նստատեղեր,
  - հյուր երկրպագուների նստատեղեր